ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2316-Ա « 07 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի Հ.2816-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 22.04.2026թ. հ.20-Ել-11853 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Ռոման Հարությունյանի 04.10.2024թ. հ.Դ-126761-24 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի հունիսի 23-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.143 բնակելի տան նկատմամբ Հայկ, Անդրանիկ, Ռոման, Մերի Հարությունյանների և Գայանե Տեր-Ավագյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.2816-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վերականգնել Երևան, Կենտրոն, Նորագյուղ հ.143 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հայկ, Անդրանիկ, Ռոման, Մերի Հարությունյանների և Գայանե Տեր-Ավագյանի սեփականության իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 224.39քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 224.39քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:».

2) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, Երևան քաղաքի Նորագյուղ հ.143 հասցեում գտնվող 224.39 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:»:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ